№ 162 Սեպտեմբերի 16 (28) 1880 Սեպտեմբերի 16 (28) № 162

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Խմբագրատան մէջ:

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція „Мшакъ“.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքաց Հայաստանից:—Ներքին տեսութիւն: Նամակ Թէլաւից: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին: Նամակ Խմբագրին: Ներքին լուրեր:—Արտաքին տեսութիւն: Հայաստան: Թիւրքիա: Աֆղանիստան: — «Մշակի» պատասխաններ: - «Մշակի» հեռագիրներ:—Յայտարարութիւններ:

ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

«Մշակի» ներկայ համարում տպում ենք Իգդիրի սեփական թղթակցից ստացած հեռագիրը հետևեալ բովանդակութեամբ: «Վասպուրականի մէջ հայոց զինված խմբեր միացան ասօրի լեռնաբնակների հետ, Մարշիմօնի առաջնորդութեամբ: Հայոց խմբերի առաջնորդը և Մարշիմօնը միասին ստորագրեցին ապստամբական յայտարարութիւններ և շրջաբերականի պէս տարածեցին ամբողջ Հայաստանում: Զանազան կողմեր ուղարկվեցան պնդադեսպաններ: Մուշի կողմը մի քանի քիւրդ ցեղեր իրանց օգնութիւն են առաջարկում հայոց զինված խմբերին:»

Վերջապէս Թիւրքաց Հայաստանի ամբողջ ազգաբնակութեան մէջ սկսում են համերաշխութեան ցոյցերը երևալ, Հայաստանի թէ հայ, թէ ասօրի և թէ քիւրդ ազգաբնակութիւնները վերջապէս սկսում են հասկանալ թէ բոլորն էլ Հայաստանցի են, թէ բոլորի շահերը նոյն են, թէ ճնշումը որ նրանց վրա գործում է Թիւրքիան հաւասարապէս ամենքի վրա է ծանրանում, թէ լինելու ինքնավարութիւնը հաւասարապէս Հայաստանի բոլոր բնակիչներին նոր կեանք պէտք է շնորհի:

Վաղուց է արդէն որ այդ համերաշխութիւնը Թիւրքաց Հայաստանի այլ և այլ ցեղերի մէջ պէտք է հաստատված լինէր, վաղուց է արդէն հայերը պէտք է աշխատէին հաստատել այդ համերաշխութիւնը իրանց և Հայաստանի այլ ցեղերի մէջ, որպէս զի Հայաստանը ներկայացնէր մի ամբողջութիւն. այն ժամանակ Թիւրքիան կամայական կերպով չէր կարող վարվել հայերի հետ: Վաղուց է արդէն որ հայերը կարող էին իրանց դպրոցների մէջ ասօրի, քիւրդ, եզիդի և այլ ցեղերի զաւակներին ընդունել, ազդել նրանց վրա բարոյապէս, տարածել քրիստոնէութիւնը մահմեդական փոքրիկ ցեղերի մէջ և այլն.... Բայց քսան տարի է արդէն որ հայերը բաւականանալով «Սահմանադրութեան» երգեր երգելով, իսկապէս ոչինչ չարեցին: Այդ բաւական չէ հայոց հոգևորականութիւնը, որ կատարելապէս զուրկ է պրոպագանդայի ոգուց, որ անընդունակ է եղել միշտ քրիստոնէական կրօնը իր շրջապատող ազգերի մէջ տարածելու, որ քարոզում էր հայոց ժողովրդին հլու հպատակութիւն դէպի Թիւրքաց կառավարութիւնը, որ աշխատում էր ստրկացնել հայ երկրագործին իր վանքերի կալուածներին և քիւրդ բէգերին, որ աշխատում էր միշտ սպանել հայ ժողովրդի մէջ ազգային ինքնաճանաչութիւնը,—մի և նոյն ժամանակ արգելում էր ընդունել հոգևոր ծխական հայոց դպրոցներում Հայաստանի այլակրօն ցեղերի զաւակներին, պիղծ համարելով լուսաւորչական երեխաների հետ միասին նստացնել դպրոցների նստարանների վրա ոչ թէ միայն քիւրդ, զազա, եզիդի, ասօրի աշակերտներին, բայց նոյն իսկ արիւնակից կաթոլիկ և բողոքական հայ մանուկներին:

Բայց լաւ է ուշ քան թէ երբէք, ասում է առածը,—և ահա այն, ինչ որ առաջ չարեցին Թիւրքաց հայերը, գոնէ այժմ սկսում են անել:

Եթէ Թիւրքաց Հայաստանի բոլոր բնակիչների՝ հայերի, ասօրիների, քիւրդերի ընդդէմ Թիւրքաց բռնութեան զէնքը ձեռքին միանալու լուրը ստուգվի,—այն ժամանակ կարելի է վստահութեամբ ասել որ Թիւրքաց Հայաստանը կատարելապէս կաղատվի Թիւրքաց տիրապետութիւնից, Հայաստանը ինքն իր ոյժով ձեռք կը բերի այն ինքնավարութիւնը, որ պէտք է աղաչելով Եւրոպային, նրանից ստանար իբրև մի շնորհ:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԷԼԱՒԻՑ

Սեպտեմբերի 2-ին

Թէլաւի հայոց երկսեռ դպրոցները, շնորհիւ վերին աստիճանի անընդունակ և անյոգ հոգաբարձուների, մահուան անկողնում հոգեվարքի մէջ են: Ամոյս 1-ին յիշեալ դպրոցները օրհնեցին և սկսվեց այդ դպրոցներում նորեկների ընդունելութիւնը, բայց թէ մինչև երբ պէտք է տևէ նորեկների ընդունելութիւնը և երբ պիտի սկսվի կանոնաւոր ուսումը, այդ միայն Աստուծուն է յայտնի: Ես չեմ հասկանում, թէ ում համար է սկսվելու ուսումը, երբ աշակերտներ չը կան, երբ ուսումնարանը դատարկվել է աշակերտներից:

Ժողովուրդը յուզված է, տղայոց ուսումնարանը դատարկվել է, աշակերտաց ծնողները հանում են իրանց որդոցը այդ տեղից և տալիս են քաղաքային և մասնաւոր ուսումնարանները և եթէ շուտափոյթ օգնութիւն չը հասցնվի, հայոց երկսեռ դպրոցները կը դատարկվեն և շատ կարելի է փակվեն: Մեր երկսեռ դպրոցները, որոնք մեր շատ դպրոցներից հարուստ են և տարեկան մօտ 200 ռուբլի արդիւնք ունեն, կարելի էր բարեկարգ և իրաւ վայելուչ դրութեան մէջ պահել: Բայց, որպէս լսում եմ, հոգաբարձութիւնը զզուել է իր պաշտօնից և այսպէս է վարվում, որ հարկաւոր կը լինէր ուրիշներին ընտրել,

Ժողովրդեան յուզման և դպրոցների աշակերտներից դատարկվելու պատճառը կանոնաւոր ուսման և զլխաւորապէս ռուսաց լեզուի և թուաբանութեան ուսման կատարեալ բացակայութիւնը և վարժուհու իր պաշտօնին անընդունակ և անյարմար լինելն է: Ռուսաց լեզուի, թուաբանութեան և էլի մի ուրիշ առարկայի (հաստատ չը գիտեմ որ առարկայի) ուսուցիչ պ. Սարգսեանցը որ արդէն մի քանի անգամ արձակված է ուսուցչութիւնից, կրկին ուսուցչական պաշտօնի է հրաւիրված: Պ. Սարգսեանցը անցեալ տարի փոխանակ իր գործով պարապելու, պարապած էր «заявленіе» գրելով, ադվոկատութեամբ և օրերով ու շաբաթներով իր սեփական գործերով զիւղերն էր շրջում և դասերին բացակայ դտնվում: Նրա դասամիջոցները շատ անգամ մի ժամից աւելի են եղել. քանիցս ես դիտմամբ ժամացոյց ձեռքիս դիտել եմ, որ պարոնը դասամիջոց է տուել, դուրս է եկել և նստել է դպրոցի հանդիման հիւսնի խանութում ամբողջ ժամով բուրնութի է քաշել և մասլահաթ է արել այնտեղ, ես այս բոլորը յայտնի էր թէ հոգաբարձութեանը և թէ վերատեսչին: Որպէս զի ընթերցողը զէթ ռուսերէնի դասաւորութեան արդիւնքի և աշակերտուհեաց այդ առարկայի մէջ ունեցած յառաջադիմութեան մասին մի գաղափար ստանայ, կը պատմեմ դրա մասին մի իրողութիւն, որ ականատես եղողներից մէկը ինձ պատմեց:

Անցեալ նոյեմբեր ամսին արքունի դպրոցների դիրեկտոր պ. Ստրելեցկին, մեր դպրոցների վերատեսուչ պ. Բարխուդարեանը, քաղաքային ուսումնարանի տեսուչները, դպրոցների հոգաբարձութիւնը և մի քանի ուրիշ անձինք այցելեցին ս. Գայեանեան օրիորդաց դպրոցին: Դասախօսում էր ռուսերէնից պ. Սարգսեանցը: Դասախօսութեան ժամանակ պ. Ստրելեցկին մօտենում է դաս պատասխանող աշակերտուհուն, ձեռքից բռնում է և հարց անում՝ թէ ինչպէս է ձեռք ուսերէն. և կը հաւատաք, ընթերցող, եթէ ասեմ որ չէր կարողանում պատասխանել: Բայց, դիտէք, այդ երրորդ բաժանման օրիորդը մօտ 5 տարի է, որ ուսանում է յիշեալ դպրոցում: Դրանից յետոյ պ. Բարխուդարեանցը առաջարկում է նոյն բաժանման օրիորդներին, որ իրանց քարետախտակների վրա գրեն իրանց ազգ և անունները և հաւատացէք դրանցից և ոչ մէկը չէ կարողանում իր ազգանունը ուղիղ գրել և շատերը գրել անգամ չեն իմացել: Այդ մի՞ոցին կարծեմ վերատեսուչը հետևեալ նկատողութիւնն է արել ռուսաց լեզուի ուսուցչին, «եղբայր, այն ժամանակն անցաւ, երբ կարդալ և գրելը միասին չէին անցնում, այժմ կարդալ գրելը միասին պէտք է սովորեցնել»: Նոյն բաժանման աշակերտուհիներից մէկին ասում են գրիր 14 և նա չէ կարողանում գրել:

Այս մի քանի խօսքերից ընթերցողը կարող է երևակայել մեր դպրոցների ոչ բարի դրութիւնը:

Երկու խօսք էլ վարժուհու մասին:

Օրիորդաց դպրոցը ունի և մէկ վարժուհի, բայց հաստատ չը գիտեմ, վարժուհու թէ վերակացուի պաշտօնով կարծեմ, այդ մի և նոյն է և միայն այսքան գիտեմ, որ դա իր խօսքով ուսել է Թիֆլիսի Զիգրաշէնի օրիորդաց ծխական դպրոցում մօտ 3 տարի և իմ խօսքերը զրպարտութիւն չը պէտք է ընդունել, եթէ ասեմ իր անունը ուղիղ ստորագրել չէ կարողանում: Նորերումս վարժուհին ծընեց մի որդի և ընդունված սովորութեամբ մօտ վեց շաբաթ իր սենեակից դուրս չի գնայ: Այսպիսով ուսումնարանը առժամանակ պիտի մնայ առանց վարժուհու, բայց, ինչպէս լսում եմ, հոգաբարձութիւնը այդ մասին արդէն հոգացել է և կարգել է նրա փոխարէն մի լուսցարար պառաւ, իբրև ժամանակաւոր պաշտօնակատար վարժուհու մինչև հոկտեմբերի 15-ը:

Այստուհետև այդ լուսցարար կինը կարող է պարծենալ և կասի «ես էլ ամիս և կէս վարժուհու պաշտօն եմ վարել Թէլաւի հայոց երկսեռ դպրոցներում»: Պ. վերատեսուչ Բարխուդարեանցի խորին ուշադրութիւնն եմ հրաւիրում մեր երկսեռ դպրոցների վրա, մանաւանդ որ դպրոցները փրկել և բարեկարգել կարելի է ամենադիւրին կերպով, որովհետև ամենահարկաւոր բանը, փողը պատրաստի է:

Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 15 սեպտեմբերի

Իգդիրի ձեր սեպհական թղթակցի հեռագիրը աւետեց մեզ Վանի հայերի առաջին քայլը դէպի ազատութիւն: Այն փոքրիկ պատերազմից յետոյ, որ նրանք մղած են վայրագ բռնաւորի դէմ, անկարելի է առանց ուշադրութեան թողնել հերոսներին: Նրանք իրանց հետևողները ունենալով կընդմարդեն բռնաւորի հրոսակներին և ցոյց կը տան աշխարհին որ իրանք անմահ դիւցազների հարազատ զաւակներ լինելով պատրաստ են իրանց արիւնը թափել հայրենեաց ազատութեան համար:

Ուրեմն, եթէ մենք հայերս չը կարողացանք պէտք եղածին չափ մեր սովալլուկ եղբայրներին օգնելով ազատել նրանց մահուան ճիրաններից, գէթ այժմ օգնութիւն հասցնենք Թիւրքաց Հայաստանի ազատութեան վիրաւոր նահատակներին:

Իսկ դուք, պ. խմբագիր, որ ազգասիրաբար յանձն էք առած Ռուսաստանի ազդայնոց ամեն կարգի նուէրները ուր որ հարկն է հասցնելու, խնդրում եմ որ ներկայիս ծրարեալ տանվեց ր, ևս, որ նուիրում եմ յոգուտ Վանի վիրաւորեալ հայերին, բարեհաճիք պատկանեալ տեղը հասցնելու, և եթէ հնար է իմ այս նամակին համար ևս մի անկիւն շնորհէք ձեր պատուական «Մշակ»-ի մէջ:

Մ. Փ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, սեպտեմբերի 2

Ինչ որ նոր է, մեր հասարակութեանը սիրելի է, ցանկալի է, իսկ յետոյ հասարակութիւնը զզվում է, անտարբեր է դառնում:

Ամեն մի բան, մի ձեռնարկութիւն, մի բարեգործութիւն, երբ առաջին անգամ երևան է գալիս մեր հասարակութեան մէջ, ամենքը նորան սիրով են ընդունում, աշխատում են մասնակցել, իրանց կարողութեան չափ օգնել գործին, բայց երբ անցաւ փոքր ինչ ժամանակ, ամենքը սկսում են սառը վերաբերվել գործին հետզհետէ, և վերջապէս գործը դադարեցնում են նոյն իսկ այն միջոցին, երբ հարկաւոր է ամեն ջանքերը և աշխատութիւնները բազմապատկել, կամ գոնէ շարունակել առ ժամանակ, որպէս զի գործը հասնի իր ցանկալի վախճանին, և ունայն չանցնեն ձեռնարկած միջոցները:

Երբ «Մշակ» լրագիրը առաջին անգամ յայտնեց Հայաստանի անտանելի սովի լուրը, և կարդաց հրաբորբոք սրտով հրաւէրներ յօգուտ սովատանջների, զանազան կողմերից կայծակի արագութեամբ երևեցան օգնութիւններ, զանազան կողմերից անձրևի նման թափվեցան նուէրներ դէպ ի «Մշակի» խմբագրատունը: Սովելոց խնամող կենտրոնական մասնաժողովը բաժանում էր այդ նուէրները բոլոր սովեալներին առանց խտրութիւն դնելու կրօնի և ազգութեան մէջ, և սորանով բարձրացրեց հայութեան անունը և պատիւը թէ Եւրօպայի, թէ Թիւրքիայի և թէ նոյն իսկ հայի արիւնարբու քուրդ թշնամիների առաջ:

Ամեն մի դասակարգին պատկանող անձինք սկսեցին նուէրներ հաւաքել: Այս միջոցին Ռուսաստանի հայերը ցոյց տուին մի օրինակելի մարդասիրութիւն որը երբէք չը պէտք է մոռանան Հայաստանի հայերը: Այս մարդասիրական գործին մասնակցեցին զանազան կրօնի և ազգութեան անձինք՝ - քրիստոնեան, մահմետականը և մոլիսականը:

Երբ Հայաստանում սովը յայտնվեց և դեռ ոչ մի կողմից օգնութիւն չէր հասել, Հայաստանի հայը բոլորովին յուսահատվեց. նա գիտէր լաւ, որ ոչինչ օգնութիւն չէր կարող ստանալ իր տէրութիւնից, նրա յոյսը մնացել էր միայն մէկի վրա, նա իր կենաց և մահու հարցը նորանից կախուած էր երևակայում. նա իր փրկութիւնը և անդունդի խորքերում գլորելը նորանից էր սպասում,—դա Էջմիածինն էր, դա հայոց ընդհանուր մայր Աթոռն էր: Բայց այս բանի մէջ Էջմիածնի գործունէութիւնը ամենքին յայտնի է:—Ուրեմն «կորայ բոլորովին» մտածեց հայաստանցի հայը, որովհետև նրան շատ սարսափեցրեց Էջմիածնի անտարբերութիւնը: Հայաստանցի հայը, դեռ մինչև այն ժամանակ չը գիտէր, թէ ունի մի երևելի և զօրեղ պաշտպան, որը պիտի աղատէր նորան ահռելի սովի ճանկերից,—դա ռուսա-հպատակ հայութիւնն էր:

Երբ Հայաստանից դուրս ընակվող հայերին, օգնութիւն հասաւ, հայաստանցի հայը զգաց որ անտէր չէ. նա յանկարծ քաջալերվեց, նա իր տուն մտնելիս երբ ընտանիքը տխրած և սոված էր տեսնում, քաջալերում էր և հպարտութեամբ արտասանում էր հետևեալ խօսքերը, թէ «ինչու կը տխրէք, սիրելիներս, մենք մեր կարծածին չափ ենտէր չենք, մեր ազգակիցները, որոնք բնակվում են ուրիշ տէրութեանց մէջ, մեզի չեն մոռացել, նրանք մեզի օգնութիւն կուղարկեն. դուք նոցա համար աղօթեցէք:» Այսպիսի խօսքերով պահում էր նա իր ընտանիքը, մինչև նորան նիւթական օգնութիւն էր հասնում: Նորա տխուր դէմքի վրա փայլում էր մի ժպիտ, նա իր անձը զոհ մատուցանելու պատրաստ էր նոցա կենաց համար, որոնք նրան օգնում էին, և իրանց նուէրները չէին խնայում նորա փրկութեան համար:

Այս միջոցին, տարաբաղդաբար, երբ պէտք է «գործին վերջը պսակի» ինչպէս ասում են, նուիրատուութիւնները սակաւացան և համարեա վերջացան: Մի քանի ամիս առաջ, որ «Մշակի» բոլոր թերթերը լցված էին նուիրատուաց ցուցակներով, այժմ հազիւ է պատահում, շատերի մէջ գոնէ մի ցուցակ: Այսպիսի ժամանակ, երբ հայաստանցի հայը ճանաչել է իր հայրենակից, հեռաւոր տեղերում ցրված հայերին, երբ նա սրտով և հոգւով միանում է մեզ հետ, մեզ պէտք էր դարձեալ շարունակել մեր օգնութիւնը դէպի նա, որը դեռ ևս շատ կարօտութիւններ ունի: Այս միջոցին, երբ շինութեան հիմքը ձգել ենք և պատերը կանգրեցնել, պէտք է աշխատենք և առաստաղը ծածկել, եթէ կամենում ենք, որ շինութիւնը աւարտենք, և կիսատ թողնելով, ծաղրալի չը դառնանք:

Կռոնոս

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 8 սեպտեմ:

Անցեալ տարի Գանձակայ լեռների վրա ճանապարհորդելու ժամանակ, ինձ պատահեց Սլաւիանկայի դուխաբոր ռուսների մօտ տեսնել ոչխարների մերինոս կոչված տեսակից: Որովհետև ոչխարների այդ ցեղը յայտնի է իր բրթի ազնուութեամբ —շատ օգտակար կը լինէր դրանց Վանայ կողմերում աճեցնելը,— այդ նպատակով ստորագրութիւն բաց արի, որ մի մասնաւոր գումար հաւաքվի, այդ ոչխարներից գնելու և Վան ուղարկելու համար: Սլաւիանկայի և Գէդարէդի հայ վաճառականները, Զարդախլու գիւղի ընակիչները սիրով ընդունեցին իմ առաջարկութիւնը և նրանց նուէրներով գնվեցաւ յիսուն հատ ոչխար: Սովի պատճառով հնար չեղաւ այդ փոքրիկ հօտը Վան ուղարկել. և ոչխարները մնացին զանազան անձանց մօտ:

Ես իմ անձնական գործերի պատճառով ստիպված լինելով առժամանակ հեռանալ Գանձակից խնդրեցի պ. Աղէքսանդր Խօջաեանին, որը ընդունեց Գեդաբէգի և Սլաւիանկայի ոչխարները, հաւաքել և յանձնել պ. Յովհաննէս Մանասեանին: Այս վերջին պարոնը, իր ստացածը Զարդախլուի ոչխարների հետ միացնելով, պիտի պահէ իր մօտ մինչև առանձին անօրինութիւն լինի իմ կողմից:

Պ. Յ. Մանասեանը ոչխարներից ստացած արդիւնքը պէտք է ծախսէ նրանց պահպանութեան համար, իսկ գառները ծնողների հետ կը մնան որպէս Վանի սեպհականութիւն:

Նուիրատուների ստորագրութեան ցուցակը յանձնել եմ պ. Աղէքսանդր Խօջաեանին:

Ա. Թոխմախեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 8 սեպտեմբերի

Կարդալով «Մեղուի» 67 և 68 համարներում տպված «Քարոզիչները» վերնագրով կատակերգութիւնը, զարմացանք գիւղացու այդ հեղինակութեան վրա. զարմանալի բան, որ մէկ կողմից հեղինակը սովորացնում է իրան նմաններին, որպէս թէ պրօտէստանտ ասված հայ աւետարանականները ազգատեաց են, միւս կողմանէ ակնարկում է միսիօնարներին որպէս թէ դոքա էլ դորանց առաջնորդներ են դէպի ազգատեցութիւնը. բայց մի և նոյն ժամանակ խեղճը սաստիկ կուրանում է, չէ կարողանում իրաւ տեսնել որ ինքն էլ այդ ազգատեացներից մէկն է իրան անստոյգ հեղինակութեան արդիւնքովը, թէ ինչու համար ասս պատմեմ:

Մենք հայ աւետարանականներս հարիւր անգամ խոստովանել ենք, երկու հարիւր անգամ էլ կրկնել ենք «Մշակի» համարներում, թէ մենք հայ ենք և հայերի հարազատ ժառանգներ: Թէ կուզ որքան էլ ատէ մեզ մեր ազգը, մենք դարձեալ հայ ենք և այսպէս էլ պիտի կենանք մինչև վերջը, բայց առանց զոհելու և ոչ մի նշանախեց մեր կրօնական համոզմունքից որը հիմնված է Աստուծոյ խօսքի սուրբ աւետարանի վրա:

Սակայն դարձեալ «Մեղուի» համախոհները անամօթաբար մեզ նոր ազգ են կարծում, որ այդ խօսքը որչափ որ զզուելի է բուն իսկ «Մեղուի» թերթերը կարդացողներին:

Եթէ մենք, հայ աւետարանականներս, մեզ անուանէինք գերմանացի, անգլիացի կամ ֆրանգ, այն ժամանակ «Մեղուն» կը սկսէր կեղծ ազգասէր ձևանալ և երկար ու բարակ ճառեր գրել մեզ վրա, և մեզ խրատել որ մեզ հայ կոչենք: Իսկ հիմա, երբ որ մենք պարզապէս խոստովանում ենք մեր ընդհանուր ազգի առաջին անկեղծութեամբ մեր ազգը սիրելը և բոլոր ճշտութեամբ մեր լեզուն պաշտպանելը, այդ ժամանակ «Մեղուն» իրան համախոհներով բոլորովին խուլ է ձևանում, ուզում է ստիպել, որ մենք մեզ ուրիշ բան անուանենք: Սորանից յետոյ ամեն մի ողջամիտ հայ, որ հայոց ազգի ապագան աչքի առաջ ունէ և ըմբռնութեամբ խորհում է և գործում նրա պատակայարմար, իրաւունք ունէ այդպիսի նուաստ միջոցներ ձեռք առնողներին համարել ազգութեան ամբողջութեանը վնասակար, չը նայելով նոցա մեզ ամբաստանելուն:

Մի խօսք աս. Ս—եանցները կարծում են թէ ծեծը աւելի մեծ նշանակութիւն կունենայ աւետարանականների վրա քան Լեոն Ժ. պապի և Կղեմէս Է. և Կարլոս Ե. կայսրի հարուածները, որոնք պատճառ եղան ամբողջ Գերմանիայի բարեկարգութեանը, առաջադիմութեանը և լուսաւորութեանը:

Իսկ այսօր մենք Կովկասի մէջի աւետարանական հայերս չը պէտք է դադարենք մատուցանելուց մեր խորին շնորհակալութիւնը մեր հզօր Կայսրին և աղօթք առ Աստուած նորա համար, որի հովանաւորութեան տակ վայելում ենք մեր խղճմտանքի ազատութիւնը: Ուրեմն եթէ բանը «Մեղուին» մնար, նա օրչափ կը հաւածէր մեզ:

Հայ-աւետարանական

ՆՆԵՐԳԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Սեպտեմբեր ամսից սկսած Ռուսաստանի բոլոր հեռագիրների համար վարձ կը վերցվի ոչ թէ քսան բառից, այլ իւրաքանչիւր բառից մի յայտնի վճար:

—

Մեզ հաղորդում են. Թիֆլիսի ՀԱՒԼԱԲԱՐ կոչված թաղում յաճախ գողութիւններ են պատահում ոչ միայն դիշերով, այլ և ցերեկով: Քանի օր առաջ կէս օրվայ ժամանակ կողոպտեցին պ. Մ. Սարումեանի տունը. թէև դռները բանված են, բայց կողոպտված իրեղէնները դեռ չեն գտնվել:

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ եկողները պատմում են, որ այնտեղ բաւական ձիւն է եկել, ցրտի սաստկութիւնից գտել են մի գիւղացի ճանապարհին սառած:

—

Մեզ գրում են ԱՍՏՐԱԽԱՆԻՑ, որ այս տարի այնտեղի օրիորդաց գիմնազիում աւարտողների թւում շատերը կային, որոնք ուզեցան Ս.Պետերբուրգ և Մոսկվա գնալ բարձրագոյն ուսման նուիրվելու նպատակով, բայց բոլոր օրիորդների ծնողները այդ դիտաւորութեան ընդդիմացան: Միայնակ բացառութիւն կազմեց տիկին Մարիամ Զ. Կատելնիկովան, որ իր աղջկան վճռեց ուղարկել Ս. Պետերբուրգ բժշկական ուսումնարան: Տիկինը սըրտաշարժ խօսքերով դիմեց իր աղջկան, յիշեցնելով նրան իր ընտրած ընթացքի բարձր նպատակը և այն օգուտը, որ օրիորդից պիտի սպասի ազգը:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆ *)

—

Պ. ԿԼԱՏՍԹՕՆ խօսք առնլով, ըսաւ թէ Պ. Աշմէտ-Պարթլէթի բանախօսութիւնը մանրամասն պատասխանի պէտք չունի: Սակայն, նորա ճառած նիւթերուն ծանրութիւնը նկատելով, հարկ կը համարիմ քանի մը կէտերու վրայ պատասխանել, ցուցնելու համար թէ այդ պատուարժան երեսփոխանին հնչիւն խօսքերն ընդհանրապէս որչափ արժէք ունին: Պ. Աշմեա-Պարթլէթի գլխաւոր խօսքն այս է որ, եթէ Թուրքիա բարենորոգում'ի գործ դնել կը դժկամակի, պատճառը մեր բարի տրամադրութեանց ապացոյցը չունենալն է: Պ. Աշմէտ-Պարթլէթ ինչո՞ւ չը յիշէր 1855 թուականն, երբ Թուրքիա Անգղիոյ և Գաղղիոյ բարի տրամադրութեանց ստոյգ ապացոյցներն ունէր 150 միլիոն ոսկւոյ ծախուց և քանի թանկագին կենաց կորստեան առթիւ: Բայց, արևմտեան տէրութեանց բարի տրամադրութեանց այսպիսի մեծամեծ ապացոյց կեցած ժամանակ, Պ. Աշմէտ-Պարթլէթ կրնայ իմացնել թէ ո՛յք էին գործադրուած բարենորոգումնք:

Պ. ԱՇՄԷՏ-ՊԱՐԹԼԷԹ.—Ի՞նչ ձեռնարկներ եղան յայնժամ ստիպելու համար զԲ. Դուռն, որ բարենորոգումներ գործադրէ:

Պ. ԿԼԱՏՍԹՈՆ.—Անդադար ձեռնարկներ և մինչև իսկ կծու յանդիմանութիւններ, արդիւնք չունենալով, ծիծաղելի եղան: Պ. Աշմէտ-Պարթլէթի տեղեկութեանց շրջանակ զարմանալի կերպիւ ընդարձակ է: (Ծիծաղներ:) Թէ՛ Եւրօպայոյ և թէ Ասիոյ վրա կը տարածի, և ամեն երևակայելի նիւթերու վրա ամեն քաղաքագէտի և ռազմագէտի գաղափարներն ու եզրակացութիւնները կը պարունակէ: (Ծիծաղներ:) Իւր թռիչքին մէջ չէն կրնար իրեն հետևիլ: Կէտ մը միայն պիտի յիշեմ, որոյ վրա քիչ մը տեղեկութիւն ունիմք: Այս է Պաթումի վիճակն: Այս մասին կը համարձակիմք Պ. Աշմէտ-Պարթլէթի հետ ուղղակի անհամաձայնութեան մէջ լինիլ, և ըսել թէ իւր զերբնտիր հեղինակութիւնք սարսափելի կերպիւ խաբեր են զինք: (Ծիծաղներ:) Ռուսք իւր կարծած բաներէն ոչ մին ըրած են. և եթէ Պ. Աշմէտ-Պարթլէթի Պաթումի նկատմամբ ունեցած տեղեկութիւնն իրրև օրինակ մը նկատուի միւս նիւթոց նկատմամբ անոր ընդարձակ և անվիճելի տեղեկութեանց, կը յանձնարարեմ իրեն որ լաւ չը ստուգած խորհրդարանին չը հաղորդէ զանոնք: (Մի՛կ ըրէք, մի՛կ ըրէք):

«Պ. Աշմէտ—Պարթլէթի բանախօսութիւնը ժողովոյս առջև գտնուող (Պ. Պրայսի) առաջարկութեան հետ յարաբերութիւն չունի. բայց ա՛յնքան ծանր ամբաստանութիւններ կը պարունակէ, որ անկարելի է լռութեամբ անցնիլ: Կըսէ թէ Անգլ. կառավարութեան կողմանէ անիրաւ կը լինի Պէրլինի դաշնագրին Թուրքիոյ աննպաստ եղող պայմանաց գործադրութեան ետեւէն իյնալ, երբ ուրիշ նպաստաւոր պայմանաց գործադրութեան հոգ չը տարուիր: Արդ, Պէրլինի դաշնագրին մէջ Թուրքիոյ նպաստաւոր յօդուած մը չեմք գիտեր, որ առանց գործադրութեան մնացած լինի: Եթէ Դուռն իւր շահուց նպաստաւոր յօդուած մը ցուցնէ, որ ուրիշ տերութեան մը յամառ ընդդիմութեամբ անգործադրելի եղած է, մեք անմիջապէս բարեկամական միջնորդութիւն կընեմք կարգադրելու համար: Բայց Դուռն այդպիսի ձեռնարկ մը չը բրաւ, և Պ. Աշմէտ-Պարթլէթի ամբաստանութիւնք բնաւ հիմ չունին: Զմեզ պատասխանատու կը բռնէ Պալքաններն Օսմանեան զօրք ղրկուած չը լինելուն համար: Բան մ'ըրի՞նք զօրք ղրկուելուն առաջքն առնելու համար: Պաշտօնի անցնելէ ի վեր բառ մ'անգամ չը ըսինք այդ նշանակութեամբ: Պ. Աշմէտ-Պարթլէթ կը կարծէ՞ թէ Սուլթանը Պալքանաց գրաւումը մեծ առաձնաշնորհում մը կը նկատէ. ապահո՞վ է որ Սուլթանն յոյժ կը փափաքի Պալքանները գրաւել տալու: (Մի՛կ ըրէք մի՛կ ըրէք:) Ի՞նչ է բոլոր այս ունայն ամբաստանութեանց նշանակութիւնը:

«Պ. Աշմէթ-Պարթլէթ Ռուսօ—Թուրքական վերջին պատերազմին պատասխանատուութիւնն իմ վրա կը թողու: Ասա՛ չափազանց զէշ յանդգնութիւն մը կը ցուցնէ: Ես ի՞նչ էի այդ իրողութեանց ժամանակ.—Անշան մասնաւոր անհատ մը, (ո՛չ ո՛չի աղաղակներ) որ պաշտօնական դիրք մը չունէր: Երկրին կառավարութիւնն իրենց ձեռք դտնուող անձինք կառավարական աշխարհավարութեան պատասխանատուութիւնները չեն կրնար մասնաւոր անհատից վրա նետել, որք երկրին զօրութիւններն իրենց տրամադրութեան ներքև չունին: Եթէ մեծ տէրութեան մ'իշխանութիւնն իրենց ձեռք ունեցող անձինք դժգոհ են այն արդիւնքէն, զոր՝ ո՛չ թէ իրենց աշխարհավարութիւնն, այլ պաշտօնի վրա չը գտնուողներուն անպաշտօն գործողութիւնն արտադրեր է, և եթէ այսպէս տէրութեան սանձը բռնելու անկարող կը տեսնեն իրենք զիրենք, պէտք է հրաժարին և գործն յանձնեն անոնց, որք այսպէս առաջնութիւն մէջ Պարթլէթի տեղեկութեանց շրջանակ զարմանալի կերպիւ ընդարձակ է: (Ծիծաղներ:) Թէ՛ Եւրօպայոյ և թէ Ասիոյ վրա կը տարածի, և ամեն երևակայելի նիւթերու վրա ամեն քաղաքագէտի և ռազմագէտի գաղափարներն ու եզրակացութիւնները կը պարունակէ: (Ծիծաղներ:) Իւր թռիչքին մէջ չէն կրնար իրեն հետևիլ: Կէտ մը միայն պիտի յիշեմ, որոյ վրա քիչ մը տեղեկութիւն ունիմք: Այս է Պաթումի վիճակն: Այս մասին կը համարձակիմք Պ. Աշմէտ-Պարթլէթի հետ ուղղակի անհամաձայնութեան մէջ լինիլ, և ըսել թէ իւր զերբնտիր հեղինակութիւնք սարսափելի կերպիւ խաբեր են զինք: (Մի՛կ ըրէք մի՛կ ըրէք:) Ռուսք իւր կարծած բաներէն ոչ մին ըրած են. և եթէ Պ. Աշմէտ-Պարթլէթի Պաթումի նկատմամբ ունեցած տեղեկութիւնն իրրև օրինակ մը նկատուի միւս նիւթոց նկատմամբ անոր ընդարձակ և անվիճելի տեղեկութեանց, կը յանձնարարեմ իրեն որ լաւ չը ստուգած խորհրդարանին չը հաղորդէ զանոնք: (Մի՛կ ըրէք, մի՛կ ըրէք):

«Պ. Աշմէտ—Պարթլէթի բանախօսութիւնը ժողովոյս առջև գտնուող (Պ. Պրայսի) առաջարկութեան հետ յարաբերութիւն չունի. բայց ա՛յնքան ծանր ամբաստանութիւններ կը պարունակէ, որ անկարելի է լռութեամբ անցնիլ: Կըսէ թէ Անգլ. կառավարութեան կողմանէ անիրաւ կը լինի Պէրլինի դաշնագրին Թուրքիոյ աննպաստ եղող պայմանաց գործադրութեան ետեւէն իյնալ, երբ ուրիշ նպաստաւոր պայմանաց գործադրութեան հոգ չը տարուիր: Արդ, Պէրլինի դաշնագրին մէջ Թուրքիոյ նպաստաւոր յօդուած մը չեմք գիտեր, որ առանց գործադրութեան մնացած լինի: Եթէ Դուռն իւր շահուց նպաստաւոր յօդուած մը ցուցնէ, որ ուրիշ տերութեան մը յամառ ընդդիմութեամբ անգործադրելի եղած է, մեք անմիջապէս բարեկամական միջնորդութիւն կընեմք կարգադրելու համար: Բայց Դուռն այդպիսի ձեռնարկ մը չը բրաւ, և Պ. Աշմէտ-Պարթլէթի ամբաստանութիւնք բնաւ հիմ չունին: Զմեզ պատասխանատու կը բռնէ Պալքաններն Օսմանեան զօրք ղրկուած չը լինելուն համար: Բան մ'ըրի՞նք զօրք ղրկուելուն առաջքն առնելու համար: Պաշտօնի անցնելէ ի վեր բառ մ'անգամ չը ըսինք այդ նշանակութեամբ: Պ. Աշմէտ-Պարթլէթ կը կարծէ՞ թէ Սուլթանը Պալքանաց գրաւումը մեծ առաձնաշնորհում մը կը նկատէ. ապահո՞վ է որ Սուլթանն յոյժ կը փափաքի Պալքանները գրաւել տալու: (Մի՛կ ըրէք մի՛կ ըրէք:) Ի՞նչ է բոլոր այս ունայն ամբաստանութեանց նշանակութիւնը:

«Պ. Աշմէթ-Պարթլէթ Ռուսօ—Թուրքական վերջին պատերազմին պատասխանատուութիւնն իմ վրա կը թողու: Ասա՛ չափազանց զէշ յանդգնութիւն մը կը ցուցնէ: Ես ի՞նչ էի այդ իրողութեանց ժամանակ.—Անշան մասնաւոր անհատ մը, (ո՛չ ո՛չի աղաղակներ) որ պաշտօնական դիրք մը չունէր: Երկրին կառավարութիւնն իրենց ձեռք դտնուող անձինք կառավարական աշխարհավարութեան պատասխանատուութիւնները չեն կրնար մասնաւոր անհատից վրա նետել, որք երկրին զօրութիւններն իրենց տրամադրութեան ներքև չունին: Եթէ մեծ տէրութեան մ'իշխանութիւնն իրենց ձեռք ունեցող անձինք դժգոհ են այն արդիւնքէն, զոր՝ ո՛չ թէ իրենց աշխարհավարութիւնն, այլ պաշտօնի վրա չը գտնուողներուն անպաշտօն գործողութիւնն արտադրեր է, և եթէ այսպէս տէրութեան սանձը բռնելու անկարող կը տեսնեն իրենք զիրենք, պէտք է հրաժարին և գործն յանձնեն անոնց, որք այսպէս առաջնութիւն

*) Շարունակութիւն:

ստացեր են իրենց վրայ։ Զեն կրնար պաշտօնի պատասխանատուութիւններէն խորշիլ։ Պ. Աշմէտ-Պարթլէթ այս վիճաբանութեան մէջ բոլորովին արտաւոց եղանակ մը գործածեց։ Այլք համարձակապէս քննադատեցին կառավարութիւնը, բայց ընդհանրապէս խնդրոյ ներքև գտնուող առաջարկութեան վրայ խօսեցան։ Այս մասին ամէն խօսք մեծ զգուշութեամբ և գրեթէ երկիւղածութեամբ պէտք էր ըսուի։

«Պ. Օնսլու բռնադատման սկզբունքն չընդունեց։ Բացատրութիւն խնդրեց այն ձիշտ ընթացից նկատմամբ, ում կառաջադրեմք հետևիլ դեռ կատարելապէս ի հանդէս չեկած պարագայից մէջ, վերաբերութեամբ բռնադատական միջոցներու գործածման։ Պէտք է եղեր յայտարարեմք թէ միտք ունիմք բռնական միջոցներ գործածել Թուրքիոյ մէջ, թէ ոչ բոլորովին կը հրաժարիմք այդպիսի գաղափարէ մը։ Ոչ ումեք այդպիսի հարցում մը կրնայ լինիլ բանաւորապէս։ Երբ միջազգային բարեմտութեան վրայ հաստատեալ պարտաւորութիւններ ունենաք, որոցմով օտար երկրի մը գործոց կրնաք միջամտել, անհնար է՝ որ այդ գործոց շարունակութեան միջոցին՝ ճշդիւ յայտնէք թէ տակաւին անծանօթ պարագայից մէջ մինչև ո՛ր աստիճան յառաջ երթալ մտադիր էք։ Այսպիսի հարցմանց դէմ յարդանօք ժխտում մ'և եթ կարելի է հանել։ (Պ. ՕՆՍԼՈՒ.—Ես ըսած էի որ ժողովոյս նստաշրջանին վերջանալէն առաջ տեղեկութիւն տաք, և ո՛չ թէ անմիջապէս։) Բայց այդ ալ դժուարութիւնէ չը կրնար ազատել զիս (կը յարէ Պ. Կլատսթոն։) Քաղաքական առ կախ գործերը ժողովոյս նիստերու շրջանին վերջանալէն առաջ մեծապէս յառաջացած կրնան լինիլ. բայց կարելի է որ այս մեծ շփոթութեանց մասին տակաւին ըստ բաւականին յառաջացած չը լինին։ Կառավարութենէն այս բանը միայն սպասելու իրաւունք ունիք որ նա բացորոշապէս յայտարարէ թէ ինք զգուշութեամբ կը գործէ ծանուցեալ պարտուց սահմանին մէջ, թէ նոր նպատակներ և անվաւեր դիտումներ չը ստեղծեր, ոչ ալ գործողութեան անլուր միջոցներ։ (Հաւանութեան աղաղակներ։) Խորհրդարանին ընդհանուր վստահութեան և կառավարութեան խոհեմութեան ու չափաւորութեան մասին ընդհանուր ապահովութիւնն՝ անոր բռնելիք ընթացից նկատմամբ երաշխաւորութիւն մը պէտք է լինին ժողովոյս։ Պահպանողականաց կողմը տրամադրութիւն մը կայ Եւրոպական համաձայնութիւնը տարակոյսի ներքև ձգելու, այդ համաձայնութիւնն օգտակար նպատակաց համար գործածելու կարելիութեան առարկելու, և նշանակելու թէ երկրորդական շարժառիթք կրնան մէն մի տերութեան գործողութեան ՃԼասել և օգտակար արդեանց արգելք լինիլ։ Այդ կրնայ ճշմարիտ լինիլ։ Վեհ. Թագուհւոյն կառավարութիւնն Եւրոպական համաձայնութիւնն երբէք ստոյգ և անսխալ գործողութեան միջոց մը չէ համարած։ Մեր ըսածն այս է որ առանց Եւրոպական համաձայնութեան ոչինչ կրնայ ձեռք բերուիլ. թէ առանց Եւրոպական համաձայնութեան՝ ընդդիմութիւն, դժկամակութիւն, անկարգութիւն և անյաջողութիւն կը տեսնուին։ (Հաւանութիւն) Անգլօ-Թուրք պայմանագիրն այդ անյաջողութեան մեծ օրինակ մ'է։ Փոքր Ասիոյ բարեկարգութեանց մասին այդ պայմանագրին արդիւնքը բացարձակ ոչնչութիւն եղաւ։ Այդ պայմանագրին նկատմամբ Եւրոպական տէրութեանց նախանձին օրինակը տուաւ Դաղղիա. թէև այդ օրինակն յայնժամ (Լորտ Պիքոնսֆիլտի պաշտօնավարութեան ժամանակ) դժբաղդաբար ծածկուած էր մեզնէ, (հաւանութիւն.) և ոչ միայն Եւրոպական տէրութեանց, այլ և Թուրքիոյ մըտքին մէջ նախանձ յառաջ բերաւ, ամենազօրաւոր կասկած մ'արթնցուց թէ Անգլիա, այդ պայմանով, փոքր Ասիոյ մէջ իւր ազդեցութիւնն ու գերիշխանութիւնը պարտի հաստատել Օսմ. ազդեցութեան և գերիշխանութեան տեղ։ Այս դժբաղդ արդիւնքներն ազդարարութիւն մ'են թէ մեք մեր գլխուն այդպիսի բացառիկ ընթացք մը պէտք չէ բռնենք։ Կրնայ ըսուիլ որ Արևելեան Եւրոպիոյ մէջ քիչ մը բարիք եղաւ, բայց որչափ բարիք որ եղաւ Արևմտեան տէրութեանց ձեռամբ, Եւրոպական համաձայնութեան միջոցաւ եղաւ։ Հելլենական թագաւորութեան գոյութիւնը մեր առջև յիշատակարան մ'է այն բաներուն, որք Եւրոպական համաձայնութեամբ կրնան ձեռք բերուիլ, զի թէև միաբան գործողութիւն մը չէր այն, սակայն Եւրոպական ամենամեծ տէրութեանց երեքն յայնժամ միացած էին և ոչ մէկ Եւրոպական տէրութիւն դէմ կը դնէր։ Եթէ այդպէս է, բանաւոր չը լինիր ըսել թէ այս համաձայնութեան սկզբունքն, որ վերջապէս մարդկութեան մի մեծ յաղթանակն յառաջ բերած է՝ Արևելից մէջ ազատութիւն և արդարութիւն հաստատելով և Արևելեան ամբողջ ցեղի մը յուսոյ դուռ բանալով,-այդ սկզբունքը չէ՝ յարմար գործիք մը, որ կ'արժէ փորձել, մինչև որ նոյնքան բարի և նոյնչափ մեծ արդիւնքներ արտադրած ուրիշ լաւագոյն գործիք մը գտնէք։

(Մասիս)

ԹԻՒՐՔԻԱ

—

Կ. Պոլսի «Stamboul» ֆրանսիական լրագիրը 15 սեպտ. հրատարակած համարի մէջ առաջնորդող յօդուածով բանակռւում է Թիւրք մամուլի և մանաւանդ «Վակիթ» և «Հաքիքաթ» լրագիրների դէմ։ «Կարելի էր կարծել, ասում է լրագիրը, որ փոխանակ հասկանալու երկրի անվստահ դրութիւնը Թիւրք մամուլը իր պարտաւորութիւնները չըմբռնելով իրան նպատակ է դրել մինչև ծայրայեղութիւն հասցնել անզգուշութեան (կամ անամթութեան) ընթացքը, որ նա բռնել է վերջին ժամանակներս։ Երէկ «Վակիթ» և «Հաքիքաթ» ասես թէ իրար խօսք էին տուել, միմեանց երդվել էին մէկ մէկու զերազանցել և որ մրցանակի գինը նորան պիտի պատկանէր, որը աւելի վտանգաւոր ծայրայեղութիւններ կը յայտնէր»։

«Ցօդուածները, ինչպէս ասում է «Stamboul» լրագիրը, լի են սպառնալիքներով յոյների դէմ (որոնք դրանց կարծիքով կը կոտորվեն ալբանցիներից), Անգլիայի դէմ, որին Թիւրք լրագիրները նախագուշակում են ամենամօտ ապագայի մէջ մի ապստամբութիւն ամբողջ Հնդկաստանի մէջ։ Իսկ Հայաստանի մասին Թիւրք լրագիրը յայտնում է, որ ամենափոքր շուտափութութիւն, ամենաչնչին ճնշումն որ արած կը լինի այս երկրի համար նորոգութիւնները ձեռք բերելու համար մի նշան կը լինի առաւել անխնայ կոտորման, քան թէ այն որ կատարվել է արևելեան Ռումելիայի մէջ»։

«Stamboul» լրագիրը այսպէս է շարունակում իր յօդուածը։

«Մենք միայն մեր զարմանք կը յայտնենք որ Թիւրք լրագիրը այն կարծիքի է, թէ հայոց հարցի լուծումն միայն կոտորումներ կարող է առաջ բերել։ Մենք յուսով ենք, որ իր պնդածին չը նայելով, «Հաքիքաթը» բաղդաւորապէս ոչինչ չէ կարող վստահապէս ասել և նրա ասածները լոկ սպառնալիքներ են։ Բայց սպառնալիքները դեռ և ոչ մի մեծ պետութեան համար արգելք չեն եղել իրագործել հաստատ մի վճիռ։ Իսկ եթէ էլ իրագործվէին թիւրք լրագրի նախագուշակութիւնները և եթէ էլ պետութիւնները նախատեսէին այս տեսակ դժբաղդութիւններ, նրանք այնու ամենայնիւ յետ չէին կանգնի ամեն միջոց գործ դնել Բերլինի ուսադաժողովի և կոնֆէրէնցիայի վճիռները իրագործելու նպատակով. և անկասկած այն վայրենութիւնները, որ նախագուշակում է «Հաքիքաթ» կոտոտաբեր կը լինէին նախ և առաջ նոյն իսկ Թիւրքիայի համար»։

«Մենք չենք պահանջում, որ մամուլի դէմ խիստ միջոցներ գործ դրվեն, այլ ընդհակառակ նոյն ազատութիւնն ենք ցանկանում նրանց, որպէս և մեզ համար, մինչև անգամ «Օսմանլիի» համար, չը նայելով որ նա քրիստոնեայ այն խմբագիրներին, որք նրա խմատուն գաղափարները չեն բաժանում, աքսորել է պահանջում։—Բայց որովհետև հասարակութիւնը, իրաւացի թէ սխալ, կարծում է թէ «Հաքիքաթի» յօդուածները բարձրից են թելադրած, մենք նոր մինիստրութեանը խրատ կը տայինք այնպիսի միջոցներ գործ դնել, որք ընթերցողներին կը համոզէին, թէ նա մերժում է այնպիսի գաղափարներ, ինչպէս դոքա, որոնց դէմ մենք ահա մաքառում ենք և որք, ճշմարիտ է, հրատարակվել են նախ քան նոր մինիստրութիւնը վարչական գործերը յանձն առած էր։

ԱՖԳԱՆԻՍՏԱՆ

—

Գեներալ Ֆէյրի զօրաբաժնի մէջ եղած «Standard» լրագրի թղթակիցը սեպտեմբերի 5-ից հետևեալ կերպով նկարագրում է Կանդահարի դրութիւնը քաղաքի պաշարման վերջանալուց յետոյ։

Երբ սեպտեմբերի 4-ին գեներալ Ֆէյրի հետ հասայ Կանդահար, քաղաքը կատարեալ անապատ էր ներկայացնում։ Փողոցների մէջ մարդիկ չը կային, խանութները փակված էին և երբեմն երբեմն միայն փողոցների մէջ կարելի էր նկատել բնակիչներին։ Այնպէս էր թւում, որ քաղաքը բացառապէս անգլիական զօրքերով էր բնակեցրած։ Այսօր քաղաքը կերպարանափոխվել է։ Բնակիչները ամեն տեղից գալիս են Կանդահար։ Խանութները բացվում են և շրջականերից անդադար պաշարեղէն են բերում։ Կանդահարը իր սովորական պատկերն է ստանում։ Բնակիչները վերադառնալով, իրանց գոյքը նոյն դրութեան մէջ են գտնում, ինչպէս և թողել էին։ Մի քանի տներ միայն կողոպտված են, մեծ մասը մնացել է առանց ձեռք տալու և բնակիչներին այդ հանգամանքը չափազանց զարմացնում է։ Էյիւբ-խանը, ինչպէս յայտնի է, մտադիր էր արևմտեան Աֆգանիստանի մէջ ընդհանուր ապստամբութիւն ծագեցնել և նրա այդ փորձը կատարեալ անաջողութեան հանդիպեց։ Նրա լրբութիւններ ամեն տեղ դրդում էին բնակիչներին ապստամբվել և կոտորել անհաւատներին. ազգաբնակութիւնը չը հետևեց այդ յորդորներին։ Էյիւբ-խանի զօրքերի մեծ մասը սպանված է, որովհետև կռուի դաշտը դեռ հիմա էլ դիակներով է ծածկված։ Այդ յաղթութիւնը մեծ ազդեցութիւն գործեց քաղաքի բնակիչների վրա։ Այժմ նրանք աւելի մեծ յարգանքով են վերաբերվում դէպի մեր զինուորները։ Ասում են, որ Էյիւբ-խանը շարունակում է անընդհատ փախչել դէպի Հերատ։ Շատերը հաւատացնում էին, որ նրա բանակի մէջ ռուսներ կային։ Նրանց մասին մինչև այժմ ոչինչ չը կարողացանք իմանալ։

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—

ԱԽԱԼՑԽԱ. 1. Շատ ցաւում ենք, որ ձեր նամակը չենք կարող տպել, որքան էլ համակրական կէտեր ունենայ։ Բայց մենք մարդիկների անձնական կեանքի մասին գրուածներ չենք տպում։ Խնդրում ենք մի՛ հետևեցէք այն մարդկանց օրինակին, որոնք սկզբունքներ յայտնել ուզենալով, իրանց թշնամիների անձնական կեանք են արատաւորում։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՍԵՓԱԿԱՆ ԹՂԹԱԿՑԻՑ

ԻԳԴԻՐ, 14 սեպտեմբերի։ Երէկ ստացվեցաւ լուր Վանից, որ Վասպուրականի մէջ հայոց զինված խումբերը միացան ասօրի լեռնականների հետ, Մարշիմնի առաջնորդութեամբ։ Հայոց խումբերի առաջնորդը և Մարշիմնը միասին ատորագրեցին ապստամբական յայտարարութիւններ և շրջաբերական պէս տարածեցին Հայաստանում։ Զանազան կողմեր ուղարկված են պնդապետներ։ Մուշի կողմը մի քանի քիւրդ ցեղերը իրանց օգնութիւն են առաջարկում հայոց զինված խումբերին։

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 սեպտեմբերի։ «Правит. Вѣстн» լրագիրը հաղորդում է, որ գնդապետ Բարանով նշանակված է Կօֆնօյ նահանգապետի պաշտօնակատար, «Новое Время» լրագիրը լսել է, որ ի նկատի ունենալով Չինաստանի հետ պատերազմ բացվելու կարելութիւնը, ռուսաց կառավարութիւնը ծախսել է Թուրքեստանի զօրքերը կազմակերպելու համար 5 միլիոն, զենուորական նաւատորմը Խաղաղ ովկիանոսը ուղարկելու համար մօտ 3 միլիոն, Վլադիվաստոկի և Ծովեղբեայ նահանգի միւս տեղերը ամրացնելու համար 3 միլիոն։

ՓԱՐԻԶ, 12 սեպտեմբերի։ Նոր մինիստրութիւնը կազմված է։ Մինիսարութեան խորհուրդի նախագահ նշանակված է Ֆերրի, լուսաւորութեան՝ Բարտելեմի, արտաքին գործերի՝ Սենտաֆոր, ծովային՝ Կլոյէ, հասարակական աշխատանքների՝ Սագի-Կարնօ, մինիստրական միւս պաշտօնները անփոփոխ մնացին։

ԼՕՆԴՕՆ, 12 սեպտեմբերի։ Կեպտաունից հեռագրում են, որ 1200 բասուտները յարձակվեցին Մագալեսուկի վրա և 5000 Մաթեսանգի վրա, բայց յետ մղվեցան։

ՍԿՈՒՏԱՐԻ, 11 սեպտեմբերի։ Ծովապետ Սէյմուր դիմեց Դուլցինիոյի մէջ եղած ալբանցիներին և Թիւրքաց իշխանութեանը, պահանջելով անյապաղ դատարկել քաղաքը և Զերնօգորցիներին յանձնել։ Ռիզա-փաշա շատ քիչ եռանդ է ցոյց տալիս։ Այսօր Չերնօգորցիները մօտեցան Դուլցինիոյին ու այսօր իսկ Սէյմուր «Խելիցան» նաւով գնաց Կատարօ, իսկ այնտեղից ուղևորվեցաւ Յեռմնիկ։

ԲԱԳՈՒԶԱ, 14 սեպտեմբերի։ Ծովապետ Սէյմուր հրամայեց նաւատորմին պատրաստ լինել երկուշաբթի օրը ուղևորվելու համար։

ՓԱՐԻԶ, 14 սեպտեմբերի։ Արտաքին գործերի մինիստրը դիմեց Ֆրանսիայի հաւատարմատարներին օտար պետութիւնների մօտ մի շրջաբերականով, որի մէջ նա ի միջի այլոց յայտնում է, թէ նոր մինիստրութիւնը ոչինչով չի փոփոխի նախկին մինիսարութեան արտաքին քաղաքականութիւնը։

ԲԱԳՈՒԶԱ, 13 սեպտեմբերի։ Այստեղ հասաւ ծովապետ Սէյմուր։ Ռիզա-փաշայի հետ բանակցութիւնները ընդհատված են։ Նաւատորմից գործողութիւնների սկսելը Դուլցինիոյի դէմ անփախչելի է։ Ալբանական միութիւնը սպառնում է, որ եթէ միացեալ նաւատորմը թշնամական գործողութիւններ կը սկսի Դուլցինիոյի դէմ, Ալբանիայի մէջ եղած հիւպատոսները կը բռնվեն։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 սեպտեմբերի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 50 կ., երկրորդ 92 ր. 37 կ., երրորդ 93 ր. 35 կ., չորրորդ 92 ր. 37 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 220 ր. 75 կ., երկրորդ 216 ր. 25 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը 90 ր. 75 կ., երկրորդ 90 ր. 75 կ., երրորդ 90 ր. 75 կ., ոսկի 8 ր.։ Ռուսաց 1 ռուբլ Լօնդօնի վրա արժէ 24,91/61 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա 210 մարկ, 25 պֆ., Փարիզի վրա 200 Ֆր. 50 սանտիմ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մի հայ զերդասուն, որը բնակվում է Մայկոպում, հրաւիրում է հայ օրիորդ—իմացող Հայերէն, Ռուսերէն և Գաղղիերէն լեզուներ, նոյնպէս և երաժշտութիւն, տեսական ուսուցչուհի տեղը ընդունելու, 600 ռուբլ տարեկան ռոճիկով: Ճանապարհի ծախսը առնում է զերդասունը իւր վրա: Ցանկացողները՝ իրանց պայմաններով՝ կարող են դիմել նամակով՝ Въ Майкопъ, Куб. обл. Николаю Іосифовичу Алихановъ.

8—10

ԵՐԴՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ ՍԵՐԳԵՑ ՎԱՍԻԼԵՎԻՉ ՉԵՄԵՍՈՎ, բնակվում է ՍՕԼՕԼԱԿ, Վազնեսենսկայա փողոցի վրա, տուն №33

2—3

ՀԱՅԵՐԷՆԻ, ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԻԱՆ, ՖՐԱՆՍԷՐԷՆԻ ԵՒ ԻՏԱԼԵՐԷՆԻ ԴԱՍԵՐ: ԵԶԻԿԵԱՆՑ: Հասցէն հարցնել «Մշակի» խմբագրատանը:

3—5 (2)

ՖՐԱՆՍԻՈՒՀԻ քոյրեր ընդունում են ՕՐՈՐԴՆԵՐԻՆ ժամ 9—1 ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուների և ԵՐԱԺՇՏՈՒԹԵՆԸՆ դասեր տալու համար: Սօլօլակի, տուն ՕՐԵԼՈՒ № 14:

3—3 (5)

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացվել է մեծ քանակութեամբ թէց ուղղակի թէյադործներից, նոյնպէս ՅԵՏՐԱԴ ՄԱԳՆԷԶԻՍ ծարաւութեան դէմ և կարբոլեան փօշի և ՀԵՂՈՒԿ տարավոխիկ հիւանդութիւնների դէմ:

10—10.

Յուլիսի 1-ից ՎԱՐՇԱՎՍԿԱՅԱ ՊԵԿԱՐՆԻՑԻՆ կից կը բացվեն ՍԵՆԵԱԿՆԵՐ, որտեղ կարելի կը լինի ստանալ ԿԱՖԷ, ՇՈԿՕԼԱԴ, ԹԷՅ և պատրաստված հանքային զանազան ջրեր:

40—40

ԹԷՄԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՉ Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ յայտնում է, որ նա այժմ բնակվում է Կուկի, Սիմէօնովսկայա փողոց, տուն Սարգիս Ալէքսանդրեանի №-16:

4—4.

Մի Ադուլեցի երիտասարդ, որ վաճառականութեան մէջ եղել է, ցանկանում է տեղ ունենալ մագազինում: որից ապահովելու համար ունի երաշխաւոր անձինք, պայմանների համար դիմել «Մշակի» խմբագրատանը:

6—8

«ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ» պատկերազարդ հանդիսի ներկայ ամի երկրորդ տետրը հրատարակուեցաւ և ուղարկուեցաւ պատուելի բաժանորդաց: Այս տետրիս մէջ տպագրուեցան տասն ազգային պատկեր, յորոց ութն՝ նկարուած և փորագրուած են յատուկ մեր հանդիսի համար: Ազգային պատկերաց ցուցակն այս է. Օրմանեան վարդապետ, Այվազեան արքեպիսկոպոս, Միքայէլ Միանսարեանց, Նուբար-Փաշա, Կարին քաղաք, Պետերբուրգայ Հայոց եկեղեցին, Սրճարան Հայոց 'ի Կարին, Սովեալ Հայ ընտանիք 'ի Վան, Վան քաղաք, Կաղմ Հայերէն աւետարանին, Նուիրեալ Նորին Կայսերական Մեծութեան 'ի Կաթուղիկոսէն ամենայն Հայոց:

Ներկայ ամի բաժանորդութիւնն վերջացած լինելով ցանկացողքն ստանալ կամ գնել «Փարոս Հայաստանի» հանդէսն վճարում են այսուհետև իւրաքանչիւր տետրի համար 1 ր. 50 կ:

Տփխիսում ստանալ կարելի է պ. Զ. Գրիգորեանցի և Կենդրոնական գրավաճառանոցներում:

Հրատարակիչ Զարմայր Մ. Մսերեանց

Հայոց պատմութիւնը իւրական աղբիւրներից ուսումնասիրելու համար կարևոր մի դիրք է «Հիւսուածք բանից նախնի պատմագրաց Հայոց» 3 հատոր, աշխատաս. Կ. Կոստանեանցի:

Ա. հատորը բովանդակում է Արշակունեաց թագաւորութեան անկման և Վարդանանց ու Վահանեանց պատերազմների մանրամասն պատմութիւնը ժամանակակից պատմիչների խօսքերով հիւսած գրաբար:

Բ. հատորը բովանդակում է նոյն պատմութիւնը աշխարհաբար, որ ա. հատորի ճիշտ թարգմանութիւնն է.

Գ. հատորը բովանդակում է ա. և բ. հատորների համար կարևոր ծանօթութիւններ. ժամանակագրական աղիւսակներ և յաւելածներ:

Վաճառվում են երեք հատորը միասին—3 ր.

ա. և բ. հատորը միասին 2 ր. 25 կ.,

բ. և գ. հատորը միասին 2 ր. 25.,

Ազգային դպրոցների համար 10 օրինակից աւել առնողին 10% զեղչում կը դրուի.

գնելու համար դիմել—Սէլէքսանդրապոլ—Յովսէփ աւագ քահանայ Կոստանեանցին.

Տփխիս—Կենդրոնական գրավաճառանոց:

Մոսկվա—Հայոց եկեղեցու երեցփոխան պ. Մեքքոն Փանեանցին:

9—10

ՎԼԱԴԻԿԱՎԿԱՍԵԱՆ ՕՂԻԻ դոքծարաստեսա ԹԻՖԼԻՍՈՒՄ ՇԱՈՒԻ յայտնում է, որ 1880 թ. յուլիսի 15-ին սկսվեցին ծախվել ամենալաւ մաքրված ՕՂԻՆԵՐ հետևեալ անուններով. ՍԵՂԱՆԻ, ԲՐԻՆՋԻ և ԲՈՒԼՄԵՐԻՆԳ: Շիշը ամենով արժէ 45 կ., առանց ամանի 38 կ., կէս շիշը 25 կ., առանց ամանի 20 կ., կ., ամեն այլ տեսակ օղիներ առանձին ցուցակ ունեն: Մեծ քանակութեամբ առնողներին նշանաւոր զիջումն է անվում: Օղիները պատրաստված են ամենալաւ հացի ՍՊԻՐՏԻՑ շոգիի մաքրելու օգնութեամբ և իրան յատկութեամբ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ամենալաւ գործարանների մէջ պատրաստվածներից վատ չեն: Պ. պ. գնողների ուշադրութիւնը դարձնում ենք առաջարկած նիւթի վրա, որի արժանաւորութեան համար գործարանը պատասխանատու է: Օղիների պահեստը գտնվում է Միքայէլեան կամուրջի վրա, Ցենտրալնայա հիւրանոցի տակ, Լիխատինսկու տանը, Վօրոնցովի արձանի դիմացը:

6—8 (2 շաբ.)

ՌԻԳԿԱՆՈՑ

ՀԻՒԱՆԴՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ԱՌԱԻՕՏԵԱՆ 9-ԻՑ ՄԻՆՉԵՒ 1 ԺԱՄԸ

Երկուշաբթի. Գավրօնսկի կանանց և մանկաբարձական հիւանդ. Լիսիցեվ և Գօրալեվիչ ներքին հ., Քիւչարեանց խիրուրգիական և աչքերի հ., Շտեմբօրսկի վէներական և կաշու հ.:

Երեքշաբթի. Մինկեվիչ խիրուրգիական հ. Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ.:

Չորեքշաբթի Լիսիցեվ ներքին հ., Շտէյմբօրսկի վէներական և կաշու հ., Աստուածատուրով կանանց հիւանդութիւնների:

Հինգշաբթի. Գավրօնսկի մանկաբարձական և կանանց հ., Միրօշնիչենկօ ներքին, կրծքային և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ., Քիւչարեանց սիֆիլիսի և սեռական օրգանների հ.:

Ուրբաթ. Մինկեվիչ խիրուրգիական հ., Լիսիցեվ ներքին հ., Բախուտով մանկաբարձական, կանանց և երեխաների հ., Շտէյմբօրսկի և Աստվածատուրով ներքին և կաշու հ.:

Շաբաթ. Կրիգէր ներքին և երեխաների հ., Լիսիցեվ ներքին հ.:

Առամնաբոյժ Օբրեխտ աղքատ հիւանդներին բժշկանոցի տոմակով ընդունում է իր տանը ամենայն օր, ամենայն ժամանակ:

Բացի կիրակի օրերից ամենայն օր առաւօտեան 9—11 ժամը բժշկանոցում լինում է մանկաբարձ կին հիւանդ կանանց ընդունելու համար:

Բժշկանոցի դիրեկտոր Լիսիցեվ:

ՊԱՏԿԵՐԱՀԱՆԴԷՍԸ վերջացնելու պատճառով զանազան տեսակ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ծախվում են չափազանց էժան ԳՆԵՐՈՎ Պ. ՄԻՐԶՕԵՎԻ նախկին պատկերահանդէսի մէջ, Գօրօվինսկի փողոց, տուն Շիօեվի, Վեսալի լուսանկարի կարգին: ՎԱՃԱՌՈՒՄԸ սկսվեցաւ սեպտեմբերի 4-ին և կը շարունակվի մինչև ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ը: Հոկտեմբերից պատկերահանդէսի ՍԵՆԵԱԿՆԵՐԻ մի մասը ՎԱՐՁՈՎ է տրվում: Միևնոյն տեղը բակում ԵՐԿԱԹԷ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ են ծախվում:

2—3

ԹԻՆՆԱՅԻ ԳԻՆԻ ջերմի դէմ, ԱՏԿԻՆՍՕՆԻ և ուրիշների ՀՈՏԱԻԵՏ ՋՐԵՐ, կարելի է գտնել ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ, Արծրունու գալէրէյի վրա:

2—3

Կաւէ կԱՆԱՆՑ ՕՁԻՔՆԵՐ և ԹԵԻՆՈՑՆԵՐ, նոյնպէս ՏՂԱՄԱՐԴԿԵՐԱՆՑ և երեխաների: Մեծ քանակութեամբ ՊՕՐՏՄՕՆԻՆՆԵՐ փոքր և մեծ փողերի համար: ՊՕՐՏԻԳԱՐ, ՊՕՐՏՎԻԶԻՏ և ԹՂԹԱԿԱԼ: Գեղեցիկ ԱԼԲՕՄՆԵՐ, զանազան ՆԵՍԵՍԵՐՆԵՐ: Գլխցերինի ՍԱՊՕՆ: Սպասում եմ օրերում մեծ քանակութեամբ տղամարդկերանց ԳԼԽԱՐԿՆԵՐ կաուօրից: ՍՏԵՓԱՆ ՄԱՆԵՎԵԼՕՎԻ խանութ Գօրօվինսկի պրոսպեկտ, ՄԱԴԻՎԱՆՈՒ ՏՈՒՆ:

2—3

ՌՈՒՍԵՐԷՆ, ՖՐԱՆՍԵՐԷՆ ԵՒ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ լեզուները գիտեցող մի ՎԱՐԺՈՒՀԻ ԴԱՍԵՐ է փընտռում: Հասցէն. Սալդատսկի բաղար, ՊՕԼԻ ՅԷՑՍԿԱՑՍ փողոց, տուն Կուզնեցովի № 30, բնակարան ՐԱՇԿԵՎԻՉԻ

4—5 (2)

Ընդունում եմ ամեն տեսակ պատուէրներ ԿՕՆՖԷԿՏՆԵՐԻ, ՊԵՐՕԺՆԻ, ՍՈՒԽԱՐԻ զանազան տեսակի, մուրաբի, և ընտիր տեսակ ՖՐՈՒԿՏՕՎԻ ԿՕՆՖԷԿՏԻ, և ամեն տեսակ կանդիտերի ապրանքի, շատ մատչելի գներով: Պատուէրները կը կատարվեն ամեն ճշտութեամբ, և խղճմտաբար. ցանկացողք կարող են դիմել ինձ հետևեալ հասցէով, Въ Тифлисъ, МАРТИРОСУ АХНАЗАРОВУ. НА СОЛОЛАКСКОЙ УЛИЦѢ, МАГАЗИНЪ ВАРШАВСКАЯ ПЕКАРНЯ փոստային կոնֆէկտ պահանջողների ճանապարհածախքը ինձ վրա եմ առնում,

Մ. Հախնազարեանց.

8—50

Դուրս եկան մամուլի տակից և վաճառվում են Կենտրոնական և Զ. Գրիգորեանցի գրախանութներում Ս. Մանդինեանի հետևեալ դասագրքեր.

1. Ազգային Ընտանեկան աշխարհք և Այբբենարան (ա. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . 25 կ.
2. Նոյնը ուսուցիչների համար բացատրութիւններով հանդերձ) . . . . . 75 կ.
3. Ազգային Դիւցազնական աշխարհ (բ. տարուայ ուսմունք և ընթերցմունք) . . . . . 30 կ.
4. Նահապետական և Հայրենի աշխարհ (գ. տարուայ ուսմունք և ընթերցմունք (բ. տպագրութիւն) . . . . . 65 կ.



Կ. ՊԱՆՑԵՐ, ԱՏԱՄԱՆՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ տուն ՉՈՒՐԱԼՕՎԻ: Եկող ձմեռվայ սեզօնի համար առաջարկում եմ պատուելի հասարակութեանը ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ՉԵՌԲԻ և ՈՏՔԻ կարի ՄԵՔԵՆԱՆԵՐ, եւրօպական առաջնակարգ գործարաններից, ամենանոր ՉԵՌԲԻ չափազանց էժան գներով, այսինքն: Չեռքի մեքենաներ 12—.5 ռուբլ: Ոտքի 50—80 ռուբլ:

5—25

Дозволено цензурою Тифлисъ, 15 Сентября 1880 г. Տպարան եղբայր Դաւթեանցների Типографія братьевъ Давидовыхъ